# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ
համայնք, ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, Հեռ. (0231)60136 ,
guy.armavir@mta.gov.am

N 82
*10 հունիս 2015թ.*

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՇՈՏ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Ղահրամանյան

Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի ղեկավարի 2015թվականի մայիս ամսվա ընթացքում ընդունած որոշումները:

Կարգադրությունները չեն արձակվել:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. Մարկոսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 guy.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՄԱՅԻՍԻ 2015թվականի N 20

## ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 16-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով <<Հայջրմուղ-կոյուղի >> ՓԲԸ-ի 2015թվականի ապրիլի 29-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի վարչական տարածքում գտնվող <<Հայջրմուղկոյուղի>> ՓԲԸ-ին պատկանող խորքային հորի սպասարկման պահպանման համար օգտագործվող 0.01756 հա հողատարածքին (ԿԾ 0217-0017) և 0.0175 հա հողատարածքին տալ հասցե՝ Երևանյան փոցոց, թիվ 39/1 և Երևանյան փողոց, թիվ 43/1

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՄԱՐԿՈՍՅԱՆ

20 15թ. հունիսի 8-ին
գ.Գայ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք

22, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136

# Ո Ր Ո Շ Ու Մ

19 ՄԱՅԻՍԻ 2015 թվականի N 21-Ն

## ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին կետով, Գայ համայնքի ավագանու 2014թվականի նոյեմբերի 17-ի թիվ 42-Ն որոշման 2-րդ կետով.

Որոշում եմ՝

1.Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի 2015 թվականի բյուջեի 01/6/1-ի 4239 հոդվածից 250.0 հազ. դրամ տեղափոխել 01/6/1-ի 4234 հոդվածին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ

2015 թ. հունիսի 8-ին
գ.Գայ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 guy.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՄԱՅԻՍԻ 2015թվականի N 22

## ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՀՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով և հիմք ընդունելով Գայ համայնքի ավագանու 2015 թվականի մայիսի 25-ի թիվ 10 որոշումը.

Որոշում եմ՝

1.Արմավիրի մարզի Գայի գյուղապետարանի պաշտոնական կայքի վարման համակարգողի պարտականությունների կատարումն վերապահել Գայի գյուղապետարանի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ Տաթևիկ Հարությունյանին:

2,Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ

2015 թ. հունիսի 8-ին
գ.Գայ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 guy.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՄԱՅԻՍԻ 2015թվականի N 23

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 26-Ի ԹԻՎ 2 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի երրորդ մասով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երրորդ մասով և հիմք ընդունելով Գայի գյուղական համայնքի ղեկավարի 2015 թվականի մայիսի 25-ի N 22 որոշումը.

Որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի ղեկավարի 2009 թվականի մարտի 26-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայողների պաշտոնների նոր անձնագրերը հաստատելու մասին>> թիվ 2 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը՝

1) Որոշմամբ հաստատված N 5 հավելվածի պաշտոնի անձնագրում <<Իրավունքներն ու պարտականությունները>> բաժինը լրացնել նոր <<Լ>> ենթակետով՝ <<Լ) հանդիսանում է Գայի գյուղապետարանի պաշտոնական կայքի վարման համակարգողը>>:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԱՐԿՈՍՅԱՆ

2015 թ. հունիսի 8-ին
գ.Գայ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 guy.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՄԱՅԻՍԻ 2015թվականի N 24

## ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի <<բ>> ենթակետով.

Որոշում եմ՝

1. Ուժը կորցրած ճանաչել Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի ղեկավարի 2015 թվականի փետրվարի 10-ի <<Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի վարչական տարածքում գտնվող խորքային հորի համար հատկացված հողամասի հողհատկացման հիմքերը վերականգնելու և հողամասը հատուցման պայմանով սեփականության իրավունքով օգտագործողին տրամադրելու մասին>> թիվ 10 որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ

2015թ. հունիսի 8-ին
գ.Գայ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 guy.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՄԱՅԻՍԻ 2015թվականի N 25

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԽՈՐՔԱՅԻՆ ՀՈՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՈՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՈՂԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի հանրապետության հողային օրենսգրքի 118-րդ 6-րդ կետի, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ կետի պահնջներով և հիմք ընդունելվ <<Հայջրմուղկոյուղի>> ՓԲԸ-ի դիմումը.

Որոշում եմ՝

1.Վերականգնելով Հայստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի վարչական տարածքում գտնվող <<Հայջրմուղկոյուղի>> ՓԲԸ-ին պատկանող խորքային հորի սպասարկման պահպանման համար օգտագործվող 0.01756 հա հողամասի հողհատկացման հիմքերը՝ սեփականության իրավունքով:

2. Նշված հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

3. Սույն որոշման անբաժանելի մասն է կազմում հողամասի հատակագիծը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ

2015 թ. հունիսի 8-ին
գ.Գայ